բեացէ հոգւով և մարմնով, տամբ և տեղեաք, զարմաք և զաւակաք, որդւովք և դստերաք, սիրելեաք և բարեկամաք, ընչիւք և ապրանաք, և ամենայն գոյացեանաք փարթամացուսցէ զձեզ. ամէն:

Եւ ընդ աւրհնութեանս՝ այս եւս յայտ լիցի սիրելեացդ և ըստացողացդ ճշմարտութեան, որ ի վաղուց հետէ ըղձամ տեսութեան ձերոյ, բայց խափան որ (ոչ) սակաւ եղեւ և լինի. քանզի երիք ամ վանս խառնակման տեղւոյս և աւերակաց չինութեանն՝ եղեւ անհանգստութիւն. և այս երկու ամ է՝ որ ի դրան արքայի էաք. և թէպէտ յայսքան վշտի մէջ էաք, այլ բաղձանքս որ առ սիրելիքդ՝ ոչ բնաւ դադարի, այլ օր ըստ օրէ հալէ և մաշէ զիս. և չափ ըղձանացս այնքան՝ որքան ծարաւեցելոյն առ զովացուցիչն: Եւ արդ, գինք արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և հարազատ որդիք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և իմ տոչորեալ հօրս զաւակք, խնդրեմ ի ձէնջ զի միմեանց յօգնութիւն հասանիցէք յամենայն գործս բարութեան. և մանաւանդ առ ձեզ է բանս իմ, որդեակք իմ քահանայք, դաստաւորք և ամենայն ժողովուրդք կամէնցոց, եաղլովցոց և Ջամօշճացոց, որ եղբարց ձերոց Իլովացւոց պարտիք ձեռնտու լինել յամենայն իրակութիւնս. եթէ ընչիւք, եթէ խօսիւք, եթէ աղօթիւք, և եթէ աչխատութեամբ մարմնոյ. այսինքն, թէ ի դուռն արքայի գնալ, և թէ այլ ինչ այսպիսի գործ, անյապաղ պարտիք յօգնութիւն հասանել. զի « եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զպատրիսպ ամուր »: Եւ դարձեալ, վասն նամակաց ձերոց, մեծահաւատ և բազմաջան որդիք իմ Իլովացիք, ծանիք. զի յորժամ նամակն ձեր եկն եհաս առ մեզ, ընդ նմին և զբօթ գալատեան թագաւորին՝ որ ի վերայ երկրիս՝ եառն. և յետ այնորիկ զկտակարանս մեր զուռւոյ կախեաք և ի յուս մեր բառնայաք. ոչ տեղի հանգստեան և ոչ ժամ աղօթից, ոչ դադար կարասեաց և ոչ երեւումն գերապայծառ կարգաւորութեան մերոյ. վասն որոյ ոչ կարացաք զմիտս և զխորհուրդս մեր ի մեզ բերել, զի ծանիցուք զմեզ, մինչեւ յերիս ամս, որ զաւերակն սակաւ չինեցաք և զետեղեցաք. և ապա ի մէջ բերեալ զնամակն ընթերցաք. յայնժամ տրտմութեան ոչ սակաւ և մթութիւն ոչ դիւրաշնաց և ցաւ ոչ հեշտափարատ պատեաց զիս. թէպէտ և յառաջագոյն վասն իրիդ այդորիկ գոյր տրտմութիւն, բայց ասէաք, թէ տուեալ իցեն արդեօք զեկեղեցիսն, և կամ սակաւ ինչ թողացուցեալ իցեն վասն եկեղեցւոյ խորհրդոյ կատարման: Եւ յորժամ ընթերցեալ իմացաք և ստուգեցաւ տրտմութիւնն կարծական, այնքան առաւելաւ տրտմութիւնս, մինչ զի ոչ ինչ թուէր նեղութիւն և աւեր տեղեացս՝ որ եղեալ էր ի պատերազմացն անօրինաց. և ապա զկնի ընթերցմանն՝ խորհուրդ արարեալ վասն այդորիկ, յարուցեալ գնացաք ի դուռն արքայի. թէպէտ և մանաւանդաբար վասն այլ իրաց. և մինչ յայսմ խորհրդի էաք և երիթացեալ սրտիւ սպասէաք վասն համբաւոյ բարւոյ այդ իրաց, եթէ թերեւս անդորրութիւն ինչ եղեալ իցէ, լուաք երիք անգամ, թէ տուեալ են զեկեղեցիսն. բայց վասն ոչ գոլոյ ի ձէնջ առ մեզ թուղթ և մարդ, ի կարծիս էաք. քանզի յաստղագոյն անորոշակի